ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/120/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **10 հուլիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի 2026 թվականի հուլիսի 10-ին ընդունելով «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության անդամ Վահագն Ժիրայրի Ավագյանի կողմից Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2021 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/120/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամների՝ 2021 թվականի գույքի և եկամուտների հայտարարագրերն Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի

ստուգման արդյունքում պարզել է, որ «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության անդամ Վահագն Ավագյանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 20-ին և 27-ին թիվ 01/832/1-2026 գրությունը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, ուղարկվել է Վահագն Ավագյանին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Վահագն Ավագյանը ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 10:00-ին, ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը Վահագն Ավագյանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և հիշյալ ժամկետում չի ներկայացվել Հայտարարագիրը՝ ծանուցումը 2026 թվականի մայիսի 6-ին փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով ուղարկվել է Վահագն Ավագյանի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով: Նշված ծանուցումը Վահագն Ավագյանի կողմից ստացվել է 2026 թվականի մայիսի 12-ին (հիմք՝ [redacted] փոստային առաքանին):

1.3 2026 թվականի մայիսի 14-ին Վահագն Ավագյանը Հանձնաժողով է ներկայացրել 01/2043-2026 գրությունը հետևյալ բովանդակությամբ.

«(...) Սույնով Ձեզ ծանուցում եմ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 01/832/1-2026 գրությամբ ներկայացված պահանջը, որը վերաբերում է «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից 2021 2022, 2023 և 2024 թվականների գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացմանը, ենթակա չէ կատարման հետևյալ հիմքով.

Ի. ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

«Սասնա Ծռեր» համահայկական կուսակցությունն անցկացրել է կուսակցության ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ 2018 թվականին, որի ընթացքում, «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին և կուսակցության Կանոնադրության 6-րդ կետի համաձայն, ընտրվել են կուսակցության ղեկավար մարմնի անդամները: Միաժամանակ, Կանոնադրության 6.1-ը կետը հստակ սահմանում է, որ ղեկավար մարմինը ընտրվում է ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ժամկետով

(https://www.moj.am/storage/uploads/Sasna_tsrer_kan.pdf): Ըստ այդմ, 2018թ. ընտրված ղեկավար կազմի լիազորությունները ավարտվել են 2020 թ.:

Հաջորդ (արտահերթ կամ հերթական) կուսակցական ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՉԻ ԱՆՑԿԱՑՎԵԼ Հայաստանը բռնազավթած թուրք-ռուսական ռեժիմի կողմից կուսակցության ղեկավար մարմնի անդամների ապօրինի դատապարտման հետևանքով, և, հետևաբար, ղեկավար մարմնի ՆՈՐ ԿԱԶՄ ՉԻ ԸՆՏՐՎԵԼ: Սա նշանակում է, որ «Կուսակցությունների մասին» սահմ. օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն 2021-2025թթ. ժամանակահատվածում ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ ՉԵՆ ԵՂԵԼ, որոնց վրա կարող էր տարածվել հայտարարագրման պարտականությունը:

II ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

1. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմ. օրենք, հոդված 28.1, մաս 1.

«Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները [...] պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր»:

Հայտարարագրման պարտականությունը ԾԱԳՈՒՄ է ԲԱՑԱՌԱՊԵՍ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Եթե անձն ընտրված չէ կամ նրա լիազորությունն ավարտվել է, ապա վերը նշված օրենքի կիրառման տիրույթ նա չի մտնում:

2. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմ. օրենք, հոդված 18, մաս 1.

Ղեկավար մարմիններն ընտրվում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով, կուսակցության համագումարի կողմից: Առանց համագումարի կողմից ընտրության, ղեկավար մարմնի անդամի կարգավիճակ ձեռք բերել ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ:

3. «Սասնա Ծռեր» կուսակցության Կանոնադրություն, կետ 6.1.

Ղեկավար կոմիտեն ընտրվում է երկու (2) տարի ժամկետով: 2018 թ. ընտրված կազմի լիազորությունները լրացել են 2020 թ.: Հաջորդ ընտրություն չի կատարվել, ուստի 2021-2025 թ.թ. ոչ մի անձ ֆորմալ-իրավական կարգով ղեկավար կոմիտեի անդամ ՉԻ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ:

4. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 34.

հայտարարագրման պարտականությունն անմիջականորեն կապված է պաշտոնատար անձի ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ հետ պաշտոնից ազատ լինելու կամ ի սկզբանե ոչ ընտրված լինելու դեպքում պարտականությունը ՉԻ ԾԱԳՈՒՄ:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, «Սասնա Ծռեր» կուսակցության ղեկավար կազմի 2018 թ. ընտրված անդամների վրա 2021 2022 2023 և 2024 թ.թ. համար գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ՉԷՐ ԾԱԳԵԼ, քանի որ՝

(ա) նրանց լիազորությունները ավարտվել են 2020 թ.՝ կանոնադրությամբ սահմանված 2-ամյա ժամկետի լրանալու արդյունքում,

(բ) 2021-2025 թ.թ. ընթացքում կուսակցությունն ղեկավար կոմիտեի ՆՈՐ ԿԱԶՄ ՉԻ ՈՒՆԵՑԵԼ, այն հիմքով, որ համագումար չի անցկացվել,

(գ) «Կուսակցությունների մասին» սահմ. օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի ուղղակի կարգավորմամբ՝ հայտարարատու են ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ոչ թե ժամկետանց լիազորությամբ ծառայած անձինք:

Ավելի ուշ, էլեկտրոնային հասցեով ինձ հասցեագրված ձեր պատասխան հաջորդ նամակում ներկայացված իրավական հիմնավորումները ուսումնասիրելուց հետո հայտնում եմ հետևյալը: «Սասնա ծռեր» կուսակցության կառավարման մարմնի անդամներին հասցեագրված՝ 2021-2025 թվականների գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու պահանջը չունի իրավական հիմք՝ ստորև ներկայացված պատճառներով:

I. ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԱՐԳԵԼՔ

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-րդ հոդվածով սահմանված հայտարարագրման պարտավորությունը ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 20-ին:

«Սասնա ծռեր» կուսակցության կառավարման մարմինը ընտրվել է 2018 թվականի հիմնադիր համագումարում՝ երկու տարի ժամկետով, ինչպես ուղղակիորեն նախատեսված է կուսակցության կանոնադրության 6.1-րդ հոդվածով, որը պետականորեն ճանաչված է կուսակցության գրանցման գործընթացով: Նշված երկամյա ժամկետը լրացել է 2020 թվականին՝ ամբողջ մեկ տարի առաջ այն պահից, երբ 28.1-րդ հոդվածը դարձավ գործող օրենք:

ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Օրենքը հետադարձ ուժ չունի, բացառությամբ այն դեպքերի, երբ այն բարելավում կամ մեղմացնում է անձի պատասխանատվությունը»:

Հանձնաժողովի կողմից ներկայացված «շարունակականության ֆիկցիայի» փաստարկը, համաձայն որի՝ կառավարման մարմինը շարունակվում է գոյություն ունենալ անժամկետ՝ անկախ կանոնադրությամբ սահմանված մանդատի ավարտից, չի վերացնում նշված հիմնարար խախտումը: Նույնիսկ եթե նման շարունակականությունը ընդունվի որպես կազմակերպական սկզբունք, որը կիրառելի է կուսակցության նկատմամբ որպես իրավաբանական անձ, այն չի

կարող հետադարձ ուժով ստեղծել հայտարարագրման պարտավորություն այն անձանց համար, որոնց ընտրության մանդատը ավարտվել է մինչև համապատասխան օրենքի ուժի մեջ մտնելը: Կազմակերպական մակարդակում գործող իրավական ֆիկցիան չի կարող հաղթահարել անհատական մակարդակում գործող սահմանադրական արգելքը:

Ավելին, կանոնադրությամբ սահմանված ժամկետի լրանալը ինքնին դադարեցնում է յուրաքանչյուր անձի՝ «կառավարման մարմնի անդամ» իրավական կարգավիճակը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք իրականացվել է նոր ընտրություն: Հակառակ մեկնաբանությունը՝ ըստ որի ժամկետը լրացած կառավարման մարմնի անդամները շարունակում են պահպանել իրենց կարգավիճակը մինչև նոր ընտրության անցկացումը, կհանգեցնի այն անհիմն հետևության, որ անձինք փաստացի կրում են այդ կարգավիճակը անժամկետ՝ կուսակցության կողմից համագումար չանցկացնելու դեպքում: Նման մոտեցումը չի բխում ՀՀ հոչակած իրավական համակարգի ոչ ոգու ոչ տառի տրամաբանությունից:

II. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ԽՈՉԸՆԴՈՏ

Նույնիսկ վերոհիշյալ հիմնական փաստարկը մի կողմ դնելու դեպքում, Հանձնաժողովի դիրքորոշումը չի դիմանում քննադատությանը նաև ինքնուրույն հիմքով:

Կառավարման մարմինը փաստացի զրկվել է գործելու հնարավորությունից՝ իր անդամների նկատմամբ պետական մարմինների կողմից իրականացված ազատազրկման հետևանքով: Նման պայմաններում մարմինը չի կարող գումարվել, որոշումներ ընդունել կամ որևէ պետական մարմնի ծանուցումներ ներկայացնել: Երբ կառավարման մարմնի անդամները կալանքի տակ են, մարմինը կորցնում է իր՝ որպես կոլեգիալ որոշումներ ընդունող մարմնի ֆիզիկական գործունակությունը. անհնար է ձևավորել քվորում, ընդունել իրավաչափ որոշումներ կամ կազմել ծանուցումներ:

Վարչական իրավունքի ընդհանուր սկզբունքների համաձայն՝ իրավական պատասխանատվություն չի կարող առաջանալ այն անձանց համար, որոնք զրկված են եղել իրենց պարտականությունները կատարելու հնարավորությունից հենց այն մարմնի գործողությունների արդյունքում, որն այժմ փորձում է նրանց պատասխանատվության ենթարկել: Ցանկացած ծանուցման բացակայության համար պատասխանատվությունը կրում են այն սուբյեկտները, որոնք ստեղծել են այդ անհաղթահարելի խոչընդոտը, և ոչ թե դրա զոհ հանդիսացած անձինք:

Բացի այդ, և հատկապես կարևոր, պաշտոնանկության կամ լուծարման մասին պաշտոնական ծանուցման բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ «կառավարման մարմնի անդամ» կարգավիճակի անժամկետ երկարաձգման համար: Անձը չի կարող ողջ կյանքի ընթացքում համարվել կառավարման մարմնի անդամ միայն այն պատճառով, որ հանգամանքները՝ այդ թվում պետության գործողություններով պայմանավորված, անհնար են դարձրել այդ մարմնի դադարեցման ձևական գրանցումը: Իրավական կարգավիճակը պետք է ծագի դրական իրավական ակտից, այլ ոչ թե դադարեցնող ակտի բացակայությունից, որի ընդունումը անհնար է եղել:

Ձեր պատասխանից մեջբերելով՝

«Կուսակցությունները պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, իրենց կանոնադրությունները և կառուցվածքը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին և պետական գրանցման նպատակով կանոնադրության փոփոխությունները ներկայացնել պետական լիազոր մարմին»

Հստակ է որ այս կետում առկա պահանջը չի կատարվել կուսակցության կողմից, կանոնադրության որևէ փոփոխություն ծանուցված չէ, հետևաբար իրավաբանորեն անընդունելի է պետական մարմնի պահանջը չկատարված փոփոխության հիմքով պահանջել կուսակցության նախկին կառավարող մարմնի անդամներից որևէ գործողություն, առավել ևս որ այդ մարմինը օրենքի ընդունումից մեկ տարի առաջ այլևս չի գործել, իսկ կուսակցությունը պետական միջամտության հետևանքով չի կարողացել կազմակերպել իր հետագա գործունեությունը:

III. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ - ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԲԽԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՖԻԿՏԻԱՑԻՑ

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական պատասխանատվությունը կարող է առաջանալ միայն օրենքով ուղղակիորեն և հստակ սահմանված հիմքով:

28.1-րդ հոդվածի 1-ին մասը որպես հայտարարատու ճանաչում է «կուսակցության մշտապես գործող կառավարման մարմնի անդամներին»: Նման անդամակցությունը կոնկրետ անհատական իրավական կարգավիճակ է, որը ծագում է դրական իրավական ակտից՝ համագումարի կողմից ընտրությունից, ինչպես պահանջվում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 4.1-րդ մասով: Այն չի կարող բխել ենթադրությունից, կազմակերպական անհրաժեշտությունից կամ իրավաբանական անձ հանդիսացող կուսակցության պարտականություններից:

Հանձնաժողովի այն պնդումը, որ օրենքը չի նախատեսում կուսակցության գոյություն առանց կառավարման մարմնի, ինքնին ճիշտ է, սակայն դա սահմանում է կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի պարտավորությունը, այլ ոչ թե կոնկրետ անձանց անհատական իրավական կարգավիճակը: Կուսակցության կողմից համագումար չանցկացնելը կարող է հանդիսանալ իրավախախտում, որը վերագրվում է կուսակցությանը, սակայն չի կարող հիմք հանդիսանալ այն անձանց ինքնամամբ հայտարարատուի կարգավիճակի անժամկետ պահպանման համար, որոնց ընտրովի մանդատը ավարտվել է:

Հակառակ մոտեցումը կհանգեցնի նրան, որ «կառավարման մարմնի անդամ» կարգավիճակը՝ իր բոլոր պարտականություններով և պատասխանատվությամբ, կվերագրվի անձին ոչ թե ընտրության արդյունքում, այլ

կուսակցության ինստիտուցիոնալ ձախողման հետևանքով, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին և իրավունքի հիմնարար սկզբունքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոգրյալի հիման վրա վերահաստատում եմ, որ Ձեր գրություններով նշված անձանց նկատմամբ 2021-2025 թվականների համար գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու իրավական պարտավորություն գոյություն չունի, քանի որ՝

ա) նրանց մանդատը ավարտվել է 2020 թվականին՝ մինչև 28.1-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը, և դրա կիրառումը կհանդիսանա հետադարձ ուժով կիրառություն՝ արգելված ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածով,

բ) կառավարման մարմինը ֆիզիկապես զրկված է եղել գործելու, գումարվելու և ծանուցումներ ներկայացնելու հնարավորությունից պետական գործողությունների հետևանքով, և որևէ ընթացակարգային խախտման համար պատասխանատվությունը չի կարող վերագրվել դրա անդամներին,

գ) հայտարարատուի կարգավիճակը բխում է ընտրությունից, այլ ոչ թե կազմակերպական ֆիկցիայից, և չի կարող անժամկետ երկարաձգվել կուսակցության կողմից համագումար չանցկացնելու հիմքով:

Ամբողջի համադրությամբ պահանջում եմ ներառել ձեզ ներկայացված վերոնշյալ հիմնավորումները իմ դեմ կազմվող վարչական իրավախախտման արձանագրության մեջ, հստակ արձանագրել իմ կողմից վարչական իրավախախտման հանգամանքը չընդունելու փաստը և օրենքով նախատեսված ժամկետում այն բողոքարկելու վերաբերյալ իմ որոշումը: Ըստ այդմ խնդրում եմ նաև վարչական իրավախախտման արձանագրության կազմման նույն օրը ինձ ուղարկել արձանագրության օրինակը Հայփոստով և ևս մի օրինակ այս էլեկտրոնային հասցեով ([redacted]) եթե ձեր համար դժվար չէ ուղարկել 2 միջոցներով միաժամանակ:»

1.4 Նշվածին ի պատասխան Հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 18-ին թիվ 01/1412-2026 գրությամբ պարզաբանել է, որ (...) Սահմանադրական օրենքը կուսակցության կազմակերպական կառուցվածքը չի դիտարկում որպես ընդհատվող կամ իրավիճակային, այլ՝ որպես անընդհատ (մշտապես) գործող համակարգ՝ ի դեմս կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի: Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնին վերապահված են կուսակցության ընթացիկ և շարունակական բնույթի մի շարք իրավասություններ, որոնք, ըստ իրենց էության, ենթադրում են դրա անընդհատ գոյություն և գործունակություն: Հետևաբար, ղեկավար մարմնի անդամների ընտրության համար կանոնադրությամբ որոշակի ժամկետի սահմանումն ինքնին չի կարող մեկնաբանվել այնպես, որ ժամկետի լրանալով կուսակցությունն իրավաչափորեն ազատվում է մշտապես գործող ղեկավար մարմին ունենալու, դրա կազմի

փոփոխությունները պատշաճ ձևակերպելու և Հանձնաժողովին կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց նշանակման կամ ազատման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցելու պարտականություններից:

1.5 2026 թվականի հունիսի 12-ին պատշաճ ծանուցված Վահագն Ավագյանի բացակայությամբ կազմվել է թիվ 134/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.6 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունիսի 17-ին թիվ 01/1789-2026 գրությամբ Վահագն Ավագյանին ծանուցում է ուղարկվել, որ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիման վրա 2026 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը՝ 14:30-ին, իրականացվելու է գործի քննություն:

1.7 Հաշվի առնելով այն, որ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվել է Վահագն Ավագյանին, սակայն ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել այն ստանալու մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 15-րդ մասը՝ ծանուցումը 2026 թվականի հուլիսի 2-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում, որից հետո՝ հինգերորդ օրը, ծանուցումը համարվել է հանձնված (ստացված): Միաժամանակ, նշված ծանուցումը՝ N 01/1925-2026 գրությամբ, ուղարկվել է ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ղեկավարին: Ի պատասխան նշված գրության՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարը 2026 թվականի հուլիսի 2-ի թիվ Պ-2227 գրությամբ հայտնել է, որ Վահագն Ավագյանը հեռախոսազանգի միջոցով տեղեկացել է ծանուցագրի վերաբերյալ, ինչպես նաև Վահագն Ավագյանը հայտնել է, որ ծանուցագիրն արդեն իսկ ստացել է էլեկտրոնային փոստի միջոցով:

1.8 2026 թվականի հուլիսի 10-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Վահագն Ավագյանի բացակայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Վահագն Ավագյանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/120/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Վահագն Ավագյանը 08.11.2018թ.-ից առ այսօր հանդիսանում է «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի՝ քարտուղարության անդամ:

3.2 Կուսակցության կողմից Հանձնաժողով ներկայացված՝ 2021 թ. Տարեկան հաշվետվության «1.1 Ղեկավար անձնակազմ» բաժնում Վահագն Ժիրայրի Ավագյանը ներկայացվել է որպես Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ՝ պաշտոնը ստանձնելու ամսաթիվ նշելով 09/11/2018թ.-ը, իսկ պաշտոնը դադարեցնելու ամսաթիվ չի նշվել:

3.3 «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության անդամ Վահագն Ավագյանը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձ:

3.4 23.01.2025թ. Հանձնաժողով է մուտքագրվել Վահագն Ավագյանի դիմումը՝ որպես կուսակցության պաշտոնատար անձ հանդես գալու վերաբերյալ, որին կից ներկայացվել է նաև «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության նախագահի համաձայնությունը՝ Վահագն Ավագյանին համապատասխան լիազորություններով օժտելու մասին: Միաժամանակ, 26.05.2025 թվականին Վահագն Ավագյանի (որպես Կուսակցության պաշտոնատար անձ) ստորագրությամբ և վերջինիս էլեկտրոնային փոստից ([redacted]) Հանձնաժողով է ներկայացել (Մ-3198-2025) կուսակցության պաշտոնատար անձանց ցանկը, որում ներառված է եղել նաև Վահագն Ավագյանը:

3.5 Վահագն Ավագյանի կողմից Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ Վահագն Ավագյանի Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

VI. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Սահմանադրական օրենքի մինչև 2021 թվականի հունվարի 19-ը գործած խմբագրության 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական գրանցման նպատակով կուսակցությունը պետական լիազոր մարմին, ի թիվս այլ տվյալների, ներկայացնում է պետական գրանցման մասին դիմում՝ ստորագրված կուսակցության մշտապես գործող

ղեկավար մարմնի անդամների կողմից՝ նրանցից յուրաքանչյուրի անձնագրային տվյալների և հաշվառման հասցեի նշումով, կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրի մասին տեղեկանք:

4.2 Սահմանադրական օրենքի մինչև 2021 թվականի հունվարի 19-ը գործած խմբագրության 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը կուսակցության համագումարն է (համագումար, ժողով, համաժողով, վեհաժողով և այլն), որը **հրավիրում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը** կուսակցության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան չորս տարին մեկ անգամ: Կուսակցության համագումարում ընտրվում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները, որոնք հաշվետու են համագումարին:

4.3 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն կուսակցության անունից այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում հանդես է գալիս **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը, իսկ կոլեգիալ ղեկավար մարմնի դեպքում՝ կոլեգիալ մարմնի ղեկավարը**:

4.4 Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը՝

1) հաստատում է կուսակցության տարեկան բյուջեն, եթե այդ իրավասությունը կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ կուսակցության համագումարին.

2) հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է կուսակցության ծախսերի նախահաշիվը.

3) կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ.

4) իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի փոփոխությունները և լրացումները.

5) որոշում է կայացնում կուսակցության լուծարման մասին, եթե համագումարն իրավազոր չի եղել.

6) իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ վերապահված այլ իրավունքներ:

4.5 Սահմանադրական օրենքի գործող խմբագրության 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը կուսակցության համագումարն է (համագումար, ժողով, համաժողով, վեհաժողով և այլն), որը հրավիրում է կուսակցության **մշտապես գործող ղեկավար մարմինը** կուսակցության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ: (...) Կուսակցության համագումարում ընտրվում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները, որոնք հաշվետու են համագումարին:

4.6 Նույն հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը ձևավորվում է կոլեգիալության սկզբունքով, որի անդամները կուսակցության կազմից ընտրվում են համագումարում՝ կուսակցության

կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետով: Մշտապես գործող ղեկավար մարմինը որոշումներ է ընդունում նիստերի արդյունքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.7 Սահմանադրական օրենքի գործող խմբագրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կանոնադրությունում սահմանվում են կուսակցության՝ (...) կառուցվածքը, **ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների** ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները, գործունեության ժամկետները և որոշումներ ընդունելու կարգը (...):

4.8 Սահմանադրական օրենքի գործող խմբագրության 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական լիազոր մարմինը մերժում է կուսակցության պետական գրանցումը, եթե՝ (...) **չեն ընտրվել կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինները** (...):

4.9 Սահմանադրական օրենքի գործող խմբագրության 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները**, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ՝ նաև հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (...):

4.10 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև **տարեկան հայտարարագրեր**:

4.11 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, (...):

4.12 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը:

4.13 2021 թվականի հունվարի 20-ին ուժի մեջ է մտել՝ ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքը, որի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունները պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, իրենց կանոնադրությունները և կառուցվածքը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին և պետական գրանցման նպատակով կանոնադրության փոփոխությունները ներկայացնել պետական լիազոր մարմին: Սույն հոդվածով նախատեսված պետական գրանցման գործառույթի դիմաց պետական տուրք չի գանձվում: 2022 թվականի հունվարի 1-ից հետո, սույն օրենքի փոփոխությամբ պայմանավորված, կանոնադրության փոփոխությունները պետական

գրանցման ներկայացնելու դեպքում կուսակցությունը չի ազատվում օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու պարտականությունից: Սույն մասով սահմանված ժամկետում կուսակցության կանոնադրությունը սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում կուսակցության կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով այն չի հակասում սույն օրենքին և կուսակցությունների գործունեությունը կարգավորող այլ օրենքներին:

4.14 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.15 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.16 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.17 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.18 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.19 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.20 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.21 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.22 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության անդամ Վահագն Ժիրայրի Ավագյանը Սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ կրել է Հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն, սակայն Օրենքով նախատեսված Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա Հանձնաժողով չի ներկայացրել, այն է՝ թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Տվյալ դեպքում պարզվել է, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Վահագն Ավագյանը 08.11.2018թ.-ից առ այսօր հանդիսանում է «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ, հետևաբար՝ Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 2-ին մասի համաձայն հանդիսացել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Արարքի որակման կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել կուսակցությունների գործունեության թափանցիկության ամբողջականությունը և բացառելու կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի առանձին անդամներին ֆինանսավորելու միջոցով կամ նրանց անունով գույքի ձեռակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելը՝ այդպիսով ապահովելով կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկությունը և վերջինիներիս անկախությունը մասնավոր շահերից:

I. Անդրադառնալով վարույթի մասնակցի այն պնդմանը, որի համաձայն՝ «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության ղեկավար կազմի անդամները ընտրվել են 2018 թվականին և նրանց լիազորությունները դադարել են 2020 թվականին՝ «Սասնա Ծռեր» համահայկական Կուսակցության կանոնադրությամբ սահմանված երկամյա ժամկետը լրանալու արդյունքում, Հանձնաժողովը գտնում է, որ այն անհիմն է և չի բխում Սահմանադրական օրենքի տրամաբանությունից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի վկայակոչված դրույթների համակցված վերլուծությունից բխում է, որ Սահմանադրական օրենքը կուսակցության կազմակերպական կառուցվածքը չի դիտարկում որպես ընդհատվող կամ իրավիճակային, այլ՝ որպես անընդհատ (մշտապես) գործող համակարգ՝ ի դեմս կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի: Օրենքը պարտադրում է, որ կուսակցության կանոնադրությամբ սահմանվեն ղեկավար մարմինների ձևավորման ու կազմալուծման կարգը, դրանց լիազորությունները, գործունեության ժամկետները և որոշումներ ընդունելու կարգը, սակայն նույն օրենքով ուղղակիորեն նախատեսում է, որ համագումարը հրավիրվում է հենց մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից, իսկ կուսակցության անունից այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում, որպես կանոն, հանդես է գալիս այդ մարմնի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

Այնուամենայնիվ, վերոնշյալ նորմերից ուղղակիորեն բխում է, որ օրենսդիրը չի նախատեսել կուսակցության՝ մշտապես գործող ղեկավար մարմին չունենալու հնարավորություն, հակառակ դեպքում այն չէր նախատեսի որպես կուսակցության պետական գրանցումը մերժելու ինքնուրույն հիմք:

Բացի այդ, մշտապես գործող ղեկավար մարմնին վերապահված են կուսակցության ընթացիկ և շարունակական բնույթի մի շարք իրավասություններ, որոնք, ըստ իրենց էության, ենթադրում են դրա անընդհատ գոյություն և գործունակություն: Հետևաբար, ղեկավար մարմնի անդամների ընտրության համար կանոնադրությամբ որոշակի ժամկետի

սահմանումն ինքնին չի կարող մեկնաբանվել այնպես, որ ժամկետի լրանալով կուսակցությունն իրավաչափորեն ազատվում է մշտապես գործող ղեկավար մարմին ունենալու, դրա կազմի փոփոխությունները պատշաճ ձևակերպելու և Հանձնաժողովին կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց նշանակման կամ պաշտոնից ազատման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցելու պարտականություններից:

Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագիր ներկայացնելու պարտականության ծագման և պահպանման իրավական հիմքը անձի՝ օրենքով սահմանված հայտարարատու պաշտոնատար անձի կարգավիճակն է, որը շարունակում է պահպանվել մինչև այդ կարգավիճակի (լիազորությունների) դադարեցման վերաբերյալ օրենքով սահմանված կարգով պետական գրանցումը: Այսինքն՝ քանի դեռ համապատասխան իրավասու մարմնի կողմից չի ընդունվել կուսակցությանն անդամությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում, կամ չի ներկայացվել Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների փոփոխության վերաբերյալ պետական գրանցման դիմում, անձը շարունակում է համարվել հայտարարատու պաշտոնատար անձ և պարտավոր է կատարել օրենքով նախատեսված հայտարարագրման պարտականությունը:

Տվյալ դեպքում վարչական վարույթի ընթացքում չի ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ 2020 թվականից հետո ձևավորվել է «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության նոր քարտուղարություն, կամ ընդունվել որոշում, որով դադարեցվել են Վահագն Ավագյանի՝ որպես քարտուղարության անդամի լիազորությունները: Ավելին, Կուսակցության կողմից 2021 թվականի տարեկան հաշվետվությունում Վահագն Ավագյանը ներկայացվել է որպես Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի գրանցվել Վահագն Ավագյանի լիազորությունների դադարեցումը կամ նոր ղեկավար կազմի ընտրությունը, վերջինս իրավական առումով շարունակել է պահպանել կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի իր կարգավիճակը: Այս ուժով՝ Վահագն Ավագյանը շարունակել է կրել Սահմանադրական օրենքով նախատեսված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը, իսկ Կուսակցության կանոնադրությամբ սահմանված երկամյա ժամկետի լրանալու փաստը չի կարող հիմք հանդիսանալ այդ պարտականությունից ազատվելու համար:

Հետևաբար՝ համագումար չհրավիրելու և Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված երկամյա ժամկետը լրանալու հանգամանքն ինքնին չի նշանակում, որ Վահագն Ավագյանի պաշտոնեական պարտականությունները դադարեցվել են, հետևաբար՝ Վահագն Ավագյանը շարունակում է հանդիսանալ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ Կուսակցության կանոնադրությամբ ևս առանձին կարգավորումներ են նախատեսված՝ սպառիչ թվարկելով կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների լիազորությունների դադարման հիմքերը: Մասնավորապես, Կուսակցության կանոնադրության 6.2-րդ կետի համաձայն՝ Կուսակցության քարտուղարության անդամի լիազորությունները դադարում են Համագումարի որոշմամբ՝

ա) Կուսակցության անդամությունը դադարեցնելու կամ կասեցնելու դեպքում,

բ) հրաժարականի դեպքում,

գ) երբեմն ամիս անընդմեջ Կուսակցության քարտուղարության նիստերին անհարգելի պատճառով չմասնակցելու դեպքում,

դ) նրա մահվան դեպքում:

Թեև Կուսակցության կանոնադրությամբ սահմանված է մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների լիազորությունների որոշակի ժամկետ, սակայն կանոնադրական կարգավորումներով նախատեսված չէ այդ ժամկետի լրացման հիմքով ղեկավար մարմնի անդամի պաշտոնավարման դադարեցում: Նշված իրավակարգավորումն ունի օբյեկտիվ հիմնավորում և նպատակ, քանի որ Կուսակցության բնականոն գործունեության ապահովման, ինչպես նաև մի շարք առանցքային որոշումների կայացման ու գործընթացների կազմակերպման համար մշտապես գործող ղեկավար մարմնի առկայությունը պարտադիր պայման է: Ավելին՝ ղեկավար մարմնի նոր կազմի ընտրության կազմակերպումը նույնպես անհնար է իրականացնել առանց գործող ղեկավար կազմի, քանի որ, Կուսակցության կանոնադրության համաձայն, համագումար հրավիրելու բացառիկ լիազորությունը վերապահված է մշտապես գործող ղեկավար մարմնին՝ Քարտուղարությանը:

II. Անդրադառնալով Վահագն Ավագյանի այն պնդմանը, թե հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը սահմանող Սահմանադրական օրենքն ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 20-ին, մինչդեռ ինքը քարտուղարության անդամ է ընտրվել 2018 թվականին և դադարեցրել իր լիազորությունները 2020 թվականին, և, ըստ այդմ, օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքի հիման վրա տվյալ կարգավորումները չեն կարող տարածվել իր նկատմամբ՝ օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքի հաշվառմամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ այս առումով Վահագն Ավագյանի պնդման ոչ իրավաչափ լինելն ուղղակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս 2020 թվականից հետո պահպանել է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի կարգավիճակը:

Մասնավորապես, կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը սահմանվել է ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն սահմանադրական

օրենքով, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 20-ին, սակայն հիշյալ սահմանադրական օրենքով չի փոփոխվել կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմինների կարգավիճակը: Դեռ ավելին՝ 2021 և ավելի վաղ գործած խմբագրությամբ, Սահմանադրական օրենքի դրույթներով ամրագրվել է կուսակցության՝ առանց մշտապես գործող ղեկավար մարմնի գոյության անհնարինությունը: Այդ ամենն ամրագրվում է մշտապես գործող ղեկավար մարմնի լիազորություններով, այն է՝ հաստատված տարեկան բյուջեի հիման վրա կուսակցության ծախսերի նախահաշվի հաստատումը, կուսակցության անունից քաղաքացիաիրավական գործարքների կնքումը, իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի փոփոխությունները ընդունելը և համագումարն իրավազոր չլինելու դեպքում կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելու բացառիկ լիազորությունը, ինչպես նաև՝ կուսակցության տարեկան բյուջեն հաստատելը, եթե այդ իրավասությունը կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ կուսակցության համագումարին:

Վերոնշյալ լիազորություններից ակնհայտ է դառնում, որ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գործունեության շարունակականությունը և մշտական բնույթ կրելը այն հիմնական տրամաբանությունն է, որ ընկած է Կուսակցությունների ընթացիկ՝ ամենօրյա գործունեության հիմքում՝ ապահովելով վերջինիս իրական ու ամենօրյա գոյությունը, այլ ոչ՝ համագումարից համագումար:

Ուստի, սույն դեպքում Սահմանադրական օրենքի հետադարձ կիրառման մասին խոսք չի կարող լինել: Վահագն Ավագյանը կրում է պարտականություն ներկայացնելու հայտարարագիր միայն 2021 թվականի և հետագա տարիների համար, այն է՝ Սահմանադրական օրենքի համապատասխան փոփոխություններից հետո, իսկ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գործունեության մշտական բնույթ կրելը պայմանավորված չէ որևէ օրենսդրական փոփոխություններով և այդ սկզբունքը գործել է Սահմանադրական օրենքի գործողության ամբողջ ընթացքում, հետևաբար՝ Կուսակցության 2018 թվականի կազմը շարունակել է գործել նաև 2020 թվականից հետո:

III. Այս համատեքստում, անդրադառնալով Վահագն Ավագյանի պնդմանը՝ Կուսակցության կողմից համագումար հրավիրելու անհնարինության վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է, որ այն ևս անհիմն է և հակասում է Սահմանադրական օրենքի իրավակարգավորումներին: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովն ընդգծում է, որ քաղաքական կուսակցությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դրույթները չեն կարող մեկնաբանվել որպես կուսակցության ղեկավար մարմինների լիազորությունների ինքնաբերաբար դադարեցման հիմք՝ առանց նոր կազմի ձևավորման: Հակառակ մոտեցումը կհանգեցներ կուսակցության կառավարման համակարգում իրավական բացի, ինչն էապես կխաթարեր կուսակցության բնականոն գործունեությունը և անհնարին կդարձներ նույնիսկ նոր ղեկավար կազմի

ընտրության գործընթացի կազմակերպումը: Հետևաբար, այն հանգամանքը, որ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների նկատմամբ կիրառված են եղել խափանման միջոցներ կամ այլ պատճառով վերջիններս հնարավորություն չեն ունեցել Կուսակցության համագումար հրավիրել մինչև 2020 թվականի նոյեմբերի 8-ը, դեռևս չի նշանակում, որ վերջիններս նաև հետագայում չպետք է հրավիրեն համագումար և այդ փաստի ուժով վերջիններիս լիազորությունները դադարեցվել են՝ հակառակ Սահմանադրական օրենքի տրամաբանության և իրավակարգավորումների:

Տվյալ դեպքում Վահագն Ավագյանի ներկայացրած մեկնաբանությունից հետևում է, որ 2020 թվականից հետո կուսակցությունն ընդհանրապես չի ունեցել մշտապես գործող ղեկավար մարմին: Նման պնդումն ուղղակիորեն հակասում է կուսակցության՝ որպես իրավաբանական անձի, ինչպես նաև վերջինիս **մշտապես** գործող ղեկավար մարմնի գործունեության շարունակականության (անընդհատության) տրամաբանությանը, ինչը հանդիսանում է ժողովրդավարական կառավարման ապահովման անհրաժեշտ երաշխիք:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ վարույթի մասնակցի այն պնդումը, թե ազատազրկման մեջ գտնվելու փաստը հանդիսացել է ֆիզիկական անհնարինություն և անհաղթահարելի խոչընդոտ, ինչի հետևանքով Կուսակցության անդամները զրկված են եղել որոշումներ ընդունելու հնարավորությունից, ևս հիմնավոր չէ: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովն ընդգծում է, որ քաղաքական կուսակցությունը, որպես հանրային-քաղաքական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ դրա առանձին անդամների կամ ղեկավարների ֆիզիկական անձով պայմանավորված կարգավիճակը (այդ թվում՝ անազատության մեջ գտնվելը) ինքնաբերաբար չի դադարեցնում կուսակցության՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարումը: Կուսակցությունների իրավունակությունը և պարտականությունները ծագում են դրա պետական գրանցման պահից և դադարում են միայն լուծարման պետական գրանցմամբ: Նշվածից հետևում է, որ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների ֆիզիկական բացակայությունը օրենքով չի հանդիսանում կուսակցության գործունեության կամ պարտավորությունների դադարեցման հիմք: Կուսակցության անունից հանդես է գալիս դրա մշտապես գործող ղեկավար մարմինը, իսկ Սահմանադրական օրենքը չի նախատեսում իրավիճակ, երբ կուսակցությունը կարող է գոյություն ունենալ առանց որևէ պատասխանատու սուբյեկտի՝ մշտապես գործող ղեկավար մարմնի, քանի որ ըստ Սահմանադրական օրենքի տրամաբանության՝ կուսակցության գործունեության անընդհատ լինելը կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը, իսկ կուսակցության գործունեության ընթացքում ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների իրացումը ապահովվում է նաև կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի միջոցով:

IV. Ինչ վերաբերում վարույթի մասնակցի այն պնդմանը, թե իրավունքի գերակայության սկզբունքի ուժով անձնական պատասխանատվությունը չի կարող բխել «կազմակերպական ֆիկցիայից», և համագումար չհրավիրելու իրավախախտումը կատարել է Կուսակցությունը, ուստի նշված հանգամանքը չի կարող հանդիսանալ հայտարարատու պաշտոնատար անձի կարգավիճակի անժամկետ պահպանման հիմք, Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարատու պաշտոնատար անձի կարգավիճակի պահպանումը ոչ թե «կազմակերպական ֆիկցիայի» արդյունք է, այլ բխում է Սահմանադրական օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պահանջից, որը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ անձի լիազորություններն օրենքով սահմանված կարգով չեն դադարեցվել:

Հանձնաժողովը նաև ընդգծում է, որ Կուսակցության կողմից համապատասխան պարտականությունների կատարումը պայմանավորված է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից անգործություն դրսևորելով, որի անդամ է հանդիսանում նաև Վահագն Ավագյանը: Մասնավորապես, Կուսակցության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու լիազորությունը ևս ըստ գործող կանոնադրության, պատկանում է Կուսակցության համագումարին, իսկ համագումար հրավիրելու լիազորությունը պատկանում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնին: Ուստի Կուսակցության կողմից անգործություն դրսևորելու և կանոնադրությունը չփոփոխելու հանգամանքը ևս կապված է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի դրսևորած անգործության հետ, որի անդամ հանդիսանում է նաև Վահագն Ավագյանը:

Բացի այդ Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ Կուսակցության կողմից Հանձնաժողով ներկայացված 2021-2025 թվականների ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունների «1.1 Ղեկավար անձնակազմ» (2025թ. հաշվետվությամբ՝ Կուսակցության մշտապես գործող ղեկավար, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամներ)» բաժնում Վահագն Ավագյանը ներկայացված է որպես Կուսակցության ղեկավար մարմնի անդամ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական հանգամանքների համակցված վերլուծությունը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ վարույթի մասնակից Վահագն Ավագյանի կողմից ներկայացված առարկությունները հիմնավոր չեն, քանի որ Կուսակցության կանոնադրական ժամկետների լրանալու հիմքով հայտարարատու պաշտոնատար անձի կարգավիճակի ինքնաբերաբար դադարեցման իրավական թեզը հակասում է հենց իր՝ վարույթի մասնակցի հետագա վարքագծին: Սույն գործի 3.4-րդ կետով հաստատված փաստի համաձայն՝ 23.01.2025 թվականին Հանձնաժողով է մուտքագրվել Վահագն Ավագյանի դիմումը՝ որպես Կուսակցության պաշտոնատար անձ հանդես գալու վերաբերյալ: Իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ սեփական վարքագծին հակասող հանդես գալու արգելքի (Venire contra factum proprium) ուժով՝ անձը չի կարող ընտրովի սկզբունքով վկայակոչել իր պաշտոնեական կարգավիճակի

առկայությունը՝ դրանից բխող իրավունքներից կամ հնարավորություններից օգտվելու համար, և միաժամանակ պնդել դրա բացակայությունը՝ հանրային-իրավական պարտականությունների կատարումից խուսափելու նպատակով: 2025 թվականին դրսևորած գիտակցված վարքագծով վարույթի մասնակիցն իսկ իրավականորեն հերքել է 2020 թվականին իր լիազորությունների դադարած լինելու վերաբերյալ սեփական պնդումը: Իսկ անազատության մեջ գտնվելու փաստով պայմանավորված «ֆիզիկական անհնարինության» և «անհաղթահարելի խոչընդոտի» վերաբերյալ փաստարկն իրավաչափ չէ, քանի որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը կրում է բացառապես անհատական (անձնավորված) հանրային-իրավական բնույթ: Այն որևէ կերպ կապված չէ Կուսակցության՝ որպես կոլեգիալ մարմնի գումարման, քվորումի ապահովման կամ կազմակերպական որոշումների ընդունման հետ, այլ իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով: Ընդ որում, հարկ է արձանագրել, որ մի շարք դեպքերում անազատության մեջ գտնվող պաշտոնատար անձանց (այս թվում՝ Կուսակցության) կողմից համապատասխան հայտարարագրերը, ինչպես նաև կուսակցության տարեկան հաշվետվությունները ներկայացվել են Հանձնաժողով, ինչը վկայում է այն մասին, որ անազատության մեջ գտնվելն ինքնին չի առաջացնում օբյեկտիվ անհնարինություն՝ կատարելու օրենքով նախատեսված պարտականությունները: Օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ ծանուցված լինելու պայմաններում վարույթի մասնակիցն ունեցել է բավարար ժամանակ և իրավական հնարավորություն՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր պարտականության կատարման ուղղությամբ, ինչը չի արվել սուբյեկտիվ պատճառներով: Հետևաբար, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի գրանցվել Վահագն Ավագյանի լիազորությունների դադարեցումը կամ նոր ղեկավար կազմի ընտրությունը, վերջինս իրավական առումով պահպանել է կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի իր կարգավիճակը և դրանից բխող հանրային պատասխանատվությունը: Հայտարարագիրը սահմանված ժամկետներում և ծանուցումից հետո չներկայացնելը հանդիսանում է անձի գիտակցված անգործության արդյունք, ինչը լիովին համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման (զանցանքի) հատկանիշներին և հիմք է վարչական տույժ կիրառելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության անդամ Վահագն Ավագյանը ենթակա է վարչական պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար:

«Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության անդամ Վահագն Ավագյանը, Սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, կրել է Կուսակցության

մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2021 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն:

Ընդ որում, Վահագն Ավագյանը մինչև գործի քննության օրը չի ներկայացրել Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ խաթարվել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հուլիսի 10-ի թիվ ՎԻՎ/120/2026 որոշմամբ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2021 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վահագն Ժիրայրի Ավագյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200,000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին*** վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահագն Ժիրայրի Ավագյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**